ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 1072-Ա/2 « » 07. հուլիս 2021 թ.

## 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 19-25-Ը ՍԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ «ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 33-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 13-19-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ «ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի N 605-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգի» 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները՝

Հրամայում եմ

1. Հաստատել 2021թ. հունիսի 19-25-ը Սինգապուրում կայացած «Ինֆորմատիկա» առարկայի դպրոցականների միջազգային 33-րդ օլիմպիադայում և հունիսի 13-19-ը Շվեյցարիայում կայացած «Ինֆորմատիկա» առարկայի եվրոպայի աղջիկների օլիմպիադայում հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վարչությանը /պետ՝ Ա.Թադևոսյան/՝ համապատասխան ուսումնական հաստատություններին տրամադրել

ֆինանսական միջոցներ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգով սահմանված չափով՝ աշակերտներին կրթաթոշակ տրամադրելու համար:

3. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /մամուլի քարտուղար՝ Գ.Մելիքբեկյան/՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն ապահովել հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում:

4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /պետ՝ Ա.Բաղդասարյան/:

5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
----------2021թ. N---------- հրամանի

# ՑԱՆԿ

## 2021թ. հունիսի 19-25-ը Սինգապուրում կայացած «Ինֆորմատիկա» առարկայի դպրոցականների միջազգային 33-րդ օլիմպիադայում և հունիսի 13-19-ը Շվեյցարիայում կայացած «Ինֆորմատիկա» առարկայի եվրոպայի աղջիկների օլիմպիադայում հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների

«Ինֆորմատիկա» առարկայի դպրոցականների միջազգային 33-րդ օլիմպիադայի հաղթողներ և մասնակից

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Աբելյան Ալեքսանդր | Քվանտ վարժ. | արծաթե մեդալ |
| 2 | Կոստանյան Էմիլ | Ֆիզմաթ դպրոց | բրոնզե մեդալ |
| 3 | Խալաթյան Արայի | Քվանտ վարժ. | բրոնզե մեդալ |
| 4 | Խաչատրյան Անի | Ֆիզմաթ դպրոց | մասնակից |

«Ինֆորմատիկա» առարկայի եվրոպայի աղջիկների օլիմպիադայի հաղթողներ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Խաչատրյան Անի | Ֆիզմաթ դպրոց | արծաթե մեդալ |
| 2 | Նազարեանս Ամարաս | Քվանտ վարժ. | բրոնզե մեդալ |